

թափանցումը Ձավախցի Թնտեսական կյանքը, գյուղի և քաղաքի մերձեց-  
ման խորացումը և հասկապես քնակչության սոցիալ-քաղաքական կյան-  
քում ընթացող երկու յթներն առաջացրին քնակչության տեղաշարժեր  
և միկրոմիգրացիաներ, որոնք հանգեցրին տարեր ազգերի ու ազգագրա-  
կան խմբերի էթնո-մշակութային փոխազեցությունների ինտենսիվաց-  
մանը։ Այս ամենը նպաստեց ամբողջ շրջանի կենցաղի և մշակույթի մաջ  
որոշակի ընդհանուրությունների ձևավորմանը։

3. Այս երկու յթների շնորհիվ Ձավախցի հայերի ինչպես Թնտե-  
սական և հասարակական կենցաղում, այնպես էլ նյութական և հոգևոր  
մշակույթի մեջ տեղի էին ունենում նորայնացումներ, մի պրոցես,  
որ մեր օրերում ավելի ինտենսիվ է ընթանում։ Այդ պրոցեսը ցայ-  
տուն կերպով արտահայտվում է քնակարանի տիպի, պբանավորման, կա-  
հավորման, սննդի, փոխադրամի ջոցների, Թնտեսական կյանքի կազմակերպ-  
ման մեջ, հարսանեկան և թաղման արարողություններում և սովորույթ-  
ներում, ազգամիջյան ամուսնություններում, փոխարարերություննե-  
րի մերրում, ժողովրդական գիտելիքների կիրարկման ոլորտում և այլն։  
Այդ պրոցեսի ինտենսիվացումը այսօր ըացարկում է էթնո-մշակութա-  
յին փոխազեցությունների առավել խորացմամբ, սեզոնային և մոնթնակա-  
յին միջրացիաների ընդլայնմամբ, ինչպես և Ձավախցի արդյունաքերա-  
կան պատենցիալի մեծացմամբ։

### Լ.Ն.ՊԵՏՐՈՍՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱԽՆԱՎԱՐԴԱՐԱՄԻՋՈՅՑՆԵՐԻ  
ԱԶԳԱԳՐԱԿԱՆ ԵՎ ՀԱԼԻՔՏԱԿԱՆ ԶՈՒԳԱՀԵՇՈՅՆԵՐԸ

1. Պատմա-ազգագրական և հատկապես ազգագրական դաշտային նյու-  
թերը հավաստում են, որ ինչպես հայ ժողովրդի, այնպես էլ կովկաս-  
յան և մերձավարելի յան ժողովուրդների անտեսական կենցաղում, մա-  
ղավոր երկանիկ սայլերին զուգընթաց, 20-րդ դ. սկզբներին տարածված  
էր նաև զանգվածեղ /միակտուր/ անիվներով երկանիկ հազու յն սայլը։  
Մրա կառուցվածքային առանձնահատկությունն այն էր, որ անիվները  
խուլ կերպով առուցված էին իրենց առանցքի շուրջը պտղող տոնու  
քառանկյուն ծայրերին։

2. Բացի բազմաթիվ մողելներից ու ըարժրաքանդակներից, Հայաստանում հնագիտական պեղումների շնորհիվ / Աւանա լմի ավազան / հայտնաբերվել է մ.թ.ա. 2-րդ հազարամյակի վերջներին / 13-12-րդ դդ./ Վերաբերող հիմնականում նշված հնագույն կառուցվածքի շուրջ 12 սայլ: Վեհաշուր ու ըարդ կառուցվածք ունեցող, , արքայական,, կամ,, իշխանական,, կոչված այդ սայլ-մեթենաները հանդիսացել են այն ժամանակների տեխնիկայի վերջին խոսքը: Այդ պեղածոների վերականգնման արդյուն նքնները հնագետներին հանձեցրել են այն եզրակացության, որ դրանց պառակային շարժումն իրականացվել է սայլի թափքի տակից խուլ կերպով ամրացված սոնու կլոր ծայրերին ազուցված և իրենց առանցքի շուրջը պտտվող միակուր անիվների միջոցով:

3. Սակայն, ելնելով առանց անվադողի, եռակոր ու ծանրաքարշ գանգվածեղ անիվի կառուցվածքից և հաշվի առնելով հնագույն այդ ժամանակներում հաղորդակցության մանալարհների անցարենապատ վիճակը հարկ է նշել, որ շատ թե թիշ տևական պտուտակացին շարժումն այդ տիպի սայլի թափքի տակից խուլ կերպով ամրացված սոնու դեպքում տեխնիկապես միանգամայն անհնար էր, որովհետև չեինդիմանա ոչ սոնու անվակալ ծայրերը և ոչ ել անիվները: Ազգագրական գուգահետները հուշում են, որ այստեղ ոչ թե սոնին պետք է խուլ կերպով ամրացված լիներ թափքին, այլ անիվները պետք է խուլ կերպով ազուցված լիներին իր առանցքի շուրջը պտտվող սոնու քառանկյուն կամ կլոր ծայրերին:

4. Առավել քան անհավանական է քառանիվ սայլերի վերականգնումը: Ըստ առաջրեկված այդ կառուցվածքից, սայլի տակից խուլ կերպով ամրացված է ոչ միայն եռեկի, այլև առջևի սոնին՝ քառանիվ տրանսպորտային մեթենայի մի սարվածք, որն իսպառ քացառում է շրջադարձ կատարելու նույնիսկ ամենափոքր հնարավորությունը: Իրականում քառանիվ տրանսպորտի նման օրինակ գոյություն ունենալ չեր կարող:

5. Առջևի՝ շրջադարձ կատարելու հնարավորությունից գուրք, անշարժ սոնու վերականգնված ոչ միշտ կառուցվածքից էլ ընել է քառանիվ սայլերի առեղների միացման սխալ պատկերացումը: Այստեղ

առեղների ետևամասերի և թափքի առաջամասի միացման վերականգնվածը գործնականում պիտանի լինել չէր կարող, քանի որ նման սարկածքի պայմաններում փոքր-ինչ շրջադարձ կատարելու դեպքում առեղների ետևամասերը /ըները/ դիմանալ չէին կարող և հեշտությամբ կշարողվեին:

6. Վերը նշվածը հանգեցնում է այն համոզման, որ հասգիտական հուշարձաններից հայտնաբերված իրերն ու առարկաները վերակառուցելիս անհրաժեշտ է տվյալ ընազավառի նյութերի, առաջին հերթին ազգագրորեն վավերացված տիպերի ու մերի սազմակողմանի հաշվառում: Միայն այդ մանապարհով կարելի է միշտ պատկերացում կազմել տվյալ դեպքում հանգույն փոխադրամիշոցների կառուցվածքային յուրահատկությունների մասին և պարզել դրանց իրական ու տեխնիկապես հարավոր վերակառուցումը:

ՑՈՒ. Ի. ՄԿՐՏՉԻՄՅԱՆ  
ՀՅՈՒՋՈՈՏԵԽՆԻԿԻ ՊԱՏՄԱ-ԾԵՎԱԿՈՒԹՅԱՆ  
ՊՐՈՔԼԵՏԱՐԻ ՀԵՏԱԶՈՏՄԱՆ ՀԱՐՑԻ ՇՈՒՐԳԸ

1. Արդի պայմաններում ազգագրական գիտության զարգացման համար առավել մեծ նշանակություն է ստանում սկզբնաղջ յուրեների շրջանակների ընդլայնումը, որը հետազոտման նոր տեսանկյունների, կենցաղա-մշակութային նոր տարրերի բացահայտման և ուսումնակրթման հարավորություն է ընձեռում: Եթևոսների կենցաղա-մշակութային որակական ինքնասիպության բացահայտման բանալին տարրեր գիտությունների տվյալների համադրական քննության մեջ է: Այդպիսի գիտությունների շարօռում որոշակի տեղ ունի նաև կենդանաբուծությունը/զոռոտեխնիկան/՝ ընտանի կենդանիների բուծմանը վերաբերող գիտությունը:

2. Անենդանաբուծական նյութի ազգագրական ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ այն կսահմանի աղջյուր է ինչպես տնտեսական կենցաղի, մշակութային հմտությունների և ժողովրդական իմացությունների բացահայտման, այնպես էլ միջէթնիկական տնտեսա-մշակութային կապերի, էթնիկական ընորոշ առանձնահատկությունների, քնակչության տեղաշարժերի հետազոտման առումով: